ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1953 Общественные науки

Պ. Հակոբյան

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Ո՞ր թվականից Արովյանն սկսեց աշխատել «Վերքի» վրա։ Թեև այս հարցը արովյանագետների ուշադրության կենտրոնում է եղել վեպի լույս աշխարհ գալու օրից մինչև վերջերս՝ ինքնուն տարուց ավելի, սակայն ուսումնասիրողներն ըստ էության չեն կարողացել լուծել և զանազան հակասական ու անհամոզիչ կարծիքներ հայտնելուց այն կողմը չեն անցել։

«Վերքի» գրության թվականի մասին կա Արովյանի ժամանակակիցներից մեկի վկայությունը։ Խոսքը Գ. Աբիմյանցի մասին է, որը Ս. Քամալյանին պատմել է «Վարժապետս 1838 թվականից սկսած մեզ մոտ կարդում էր Աղասու պատմությունը՝ հատված-հատված։ Թե որքան լրիվ էր այն ժամանակ, չեմ կարող ասել. բայց մենք սիրով լսում, սրտանց ոգևորվում էինք»։ Աբիմյանի ասածների հավաստիությունը կասկածելի է, թեև շատերն են մեր օրերում այն հալած յուղի տեղ ընդունում։

Լեոն իր «Ռուսահայոց գրականությունը» գրքում անդրադարձել է այդ հարցին, սակայն որոշակի բան չի կարողացել ասել. «Խ. Արովյանցի «Վերք Հայաստանին»... գրված է, ինչպես կարծում են, 1842 թվականին[1] կամ «Վերք Հայաստանին» գրվել է ինչպես ենթադրում են, 1840—41 թվականներին»[2]։ Լեոն, այսպիսով, հենվում է ուրիշների վրա և հակասական բաներ ասում։

Առանց մանրամասն ուսումնասիրելու, թե երբվանից հեղինակն սկսեց վեպի վրա աշխատել, Լ. Մանվելյանն էլ, հենվելով «Պարապ վախտի խաղալիքի» առաջաբանի վրա, գրել է, թե «Վերք Հայաստանին» արդեն պատրաստ էր 1841 թվականին։ Փափազյանի մոտ, նույնպես, որոշակիությունը բացակայում է։ Նրա «Պատմություն հայոց գրականության» գրքի 340-րդ էջում «Վերք Հայաստանին» հիշվում է 1841 թվականին գրված, իսկ երկու էջ ներքև (343)՝ «գրված 1840—41-ին»։ Որոշակի բան չենք գտնում նաև անցյալի մյուս ուսումնասիրողների մոտ։

«Վերքի» գրության թվականի ճշտմանը մեծապես նպաստեց վեպի ինքնագրի ուսումնասիրությունը, որով ամենից ավելի զբաղվել են Ե. Շահազիզը և Ռ. Զարյանը։ Սակայն, չնայած դրան, «Վերքի» գրության թվականը սրանք ևս չկարողացան լուծել։ Վաստակավոր բանասեր Ե. Շահազիզը մինչև 1943 թվականը վեպի գրության թվականի մասին որոշակի կարծիք չուներ։ Նա մերթ ընդունում էր 1840, մերթ էլ 1841 թվականները։ Արովյանի «Դիվանի» առաջին հատորի 78 և 362 էջերում նա գրում է, թե «Վերքը» 1840-ին է գրված, իսկ նույն գրքի 146 էջում՝ 1841 թվականին։ Արովյանի ընդարձակ կենսագրության մեջ, արդեն 1943 թվականին, Շահազիզը հետևողականորեն շեշտում է որպես վեպի գրության թվական՝ 1840 թվականի բարեկենդանը[3]։ Ե. Շահազիզը միաժամանակ համամիտ է այն կարծիքին, որ դեռ 1838 թվականից վեպի որոշ հատվածներ Արովյանը գրած է եղել[4]։

Ե. Շահազիզից գրեթե չի տարբերվում Ռ. Զարյանը, թեպետ նա հատուկ քննության է ենթարկել վեպի գրության թվականի հարցը և ժխտել ուրիշներին (Լեո. Մանվելյան, Փափազյան)։ Հենվելով վեպի անվանաթերթի և Աբիմյանի հուշերի վրա, Զարյանը ձևել է հետևյալ եզրակացությունը. «Իսկ որ թվականին է սկսել Արովյանը գրել վեպը՝

---

[1] Լեո, *Ռուսահայոց գրականությունը*, էջ 13։

[2] Նույն տեղում, էջ 168։

[3] Ե. Շահազիզ. *Խ. Արովյանի կենսագրությունը*, էջեր՝ 61, 98—99, 101—102։

[4] Նույն տեղում, էջ 103։

հայտնի չէ։ Պարզ է միայն այն, որ վեպի գրումն ընկնում է հետզոր պատյան, այսինքն՝ Թիֆլիսյան շրջանում, մինչև 1840-ը... Դեռ 1838-ին վեպի որոշ հատվածներ (եթե ոչ ամբողջ վեպը) գրված են եղել»[1]։ Նույն կարծիքը Զարյանը կրկնել է նաև «Աբովյանի կյանքը» գրքում[2]։ Ի. Զարյանի կարծիքը թեև այժմ ամենատարածվածն է, սակայն ընդունելի չէ, որովհետև, ինչպես ստորև կտեսնենք, «Վերքը» գրված է հետագայում։

«Վերքի» գրության թվականի մասին ինքնուրույն կարծիքներ ունեն նաև պրոֆ. Գ. Աբովը և վեպի ակադեմիական հրատարակության ծանոթագրողը։ Պրոֆ. Գ. Աբովը թեև առանձին քննության առարկա չի դարձրել հիշյալ հարցը, սակայն նրա „Хачатур Абовян" աշխատության մեջ մենք հանդիպում ենք մյուսներից տարբեր հետևյալ տեսակետին. „Еще 1839 году, когда Абовян писал свой роман „Раны Армении", ... „Абовян создал новый армянский роман „Верк Айастани" („Раны Армении") (1836—1840), կամ „...роман этот, написанный в 1836—1740 (sic! 1840) годах"[3]։

Պարզ է, որ Աբովի կարծիքով Խ. Աբովյանը «Վերքի» ստեղծմանն է ձեռնարկել 1836 թվականին, գրել ընդմիջումներով և ավարտել 1840-ին։ Այս նոր և ինքնուրույն կարծիքի վրա հավատ չի կարելի ընծայել։ Պահպանվել է «Վերքի» սևագիրը, որի էջերից մեկը, որ երբեմն եղել է Թիֆլիսի գավառական դպրոցի գործի շապիկ, կրում է 1841 թվականը։ Ինչպես կարող էր Աբովյանը իր վեպը 1836—40 թվականների ժամանակամիջոցում գրել, երբ նրա սևագիրը գրված է 1841 թվականի թղթի վրա։

«Վերքի» ակադեմիական հրատարակության ծանոթագրողն էլ ասում է. «Պետք է կարծել, որ «Վերք Հայաստանին» սկսված ու ավարտված է 1840 թվականին, այն էլ կարճ ժամանակամիջոցում... հեղինակն այն մի քանի անգամ արտագրել է և վերամշակել»[4]։

Եթե հասարակումարի բերենք «Վերք Հայաստանի» գրության թվականի մասին հայտնված կարծիքները, ապա դրանք կհանգեն հետևյալին.

ա) «Վերքը» գրվել է 1838-ից։

բ) «Վերքը» հիմնովին գրվել ու ավարտվել է 1840-ին։

գ) «Վերքը» գրվել է 1838—1840 թվականներին։

դ) «Վերքը» գրվել է 1836—1840 թվականներին։

Վերոհիշյալ չորս կարծիքներն էլ անբավարար են և թերի, որովհետև բոլորն էլ սկսում կամ հանգում են 1840 թվականին, բոլորի ելակետն էլ, վերջին հաշվով «Վերքի» անվանաթերթն է։

Քանի որ այժմյան աբովյանագետների միակ կովանը «Վերքի» անվանաթերթն է, սկզբից էլ ասենք, որ նրա վրա եղած թվականը հավաստի չէ։ Աբովյանի բնորոշ ձեռագրով գրված են միայն հետևյալ բառերը. «Վերք Հայաստանի ողբ հայրենասիրի։ Պատմական վէպ։ Բաժանեալ յերիս մասունս ի Խ. Աբովեանէ, վերաստեղչէ արհուեական, նահանգական ուսումնարանին՝ որ ի Տփխիս։ Սրան հաջորդող՝ «ի 1840 Թիֆլիզ» տողը գրված է այլ ձեռքով և կասկածելի է։ Անվանաթերթի նախորդ և վերջին տողերի ուշադիր համեմատությունը հանգեցնում է հետևյալին. տարբեր ձեռքով և տարբեր ժամանակներում են գրված այդ տողերը։ Միևնույն տեղանունը անվանաթերթի վրա օգտագործված է երկու անգամ՝ «Տփխիս» և «Թիֆլիզ» ձևերով։ Սրանցից վերջինը գրված է ոչ Աբովյանի ձեռքով և այլ թանաքով։ Թվականը՝ 1840, գրված է նախկին ջնջված (թվականի) տեղը՝ մատիտով։ Եզրակացությունը պարզ է. գործ ունենք հեղինակային անվանաթերթի վրա եղած թվականի կեղծման փաստի հետ։

Այսպիսով, «Վերքի» գրության թվականը 1840-ը համարողների այս մի հատիկ կրովանը վերանում է մեջտեղից՝ որպես հետագա խեղաթյուրում. վերանում է նաև այն սխալ կարծիքը, իբրև «Վերքի» վրա հեղինակը սեփական ձեռքով նշանակել է 1840 թվականը, իսկ 1840-ը մնում է «Վերքի» գրության ժամանակի մասին արված հնարավոր ենթադրություններից մեկը։

Իսկ ո՞ր թվականին է գրվել «Վերքը»։

«Վերք Հայաստանի» վեպի մեզ հասած ձեռագրերի ուշադիր քննությունը և հեղինակի իր իսկ հաղորդած տեղեկությունները վեպի գրության թվականի մասին մեզ բերում

---

[1] Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հ. I, 1939, էջ 333։

[2] Ի. Զարյան, Աբովյանի կյանքը, Երևան, 1940, էջ 92—93։

[3] Г. Абов, Хачатур Абовян, Ереван, 1948, стр. 68, 97 и 145.

[4] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1948, էջ 380։

են այն եղրակացության, որ նա չէր կարող և չի գրված 1840 թվականին։ Թղթերից մեկում Արովյանն պատմում է, որ մինչև վեպի գրության ձեռնարկելը, դրել է աշխարհաբար լեզվով բազմաթիվ հեքիաթներ և առակներ, դրանք կարդացել ծանոթների ու աշակերտների մոտ, նրանց կարծիքն հարցրել և միաժամանակ փորձել — հնարավոր է աշխարհաբար գրականության լեզու դարձնել, նրանով ժողովրդի սրտին դուր եկող բաներ գրել։ Այդ գործերի մի մասը Արովյանը տեղավորել է տպագիր ու ձեռագիր «նախաշավիղների», մյուսը «Վերքի» գրությունից հետո կազմված «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի և մի այլ մասն էլ՝ կարճառոտ ու զվարճալի պատմությունների հավաքածո տետրակների մեջ։ Հիշյալ գործերի քննությունը ցույց է տալիս, որ նրանք գրված են 1836 – 1841 թվականներին ընկած ժամանակամիջոցում։ Այդ գործերի շարքում կան Աղասուն վերաբերող բանաստեղծություններ ևս։ 1838 թվականից, աշակերտների մոտ Արովյանը կարող էր կարդալ այդ ոտանավորները, բայց ոչ «Վերքը»։

«Վերքի» գրության թվականի մասին ծանրակշիռ փաստեր կան վեպի առաջաբանում, որոնց վրա արովյանագետները պատշաճ ուշադրություն չեն դարձրել, հակառակ պարագայում անվանաթերթի թվականի անվավեր լինելը նրանք կհասկանային։ Առաջաբանում Արովյանը պատմում է, որ մինչև վեպի գրությանը ձեռնարկելը, ինքը ապրել է խռովահույզ հոգեվիճակ, մինչև իսկ որոշել է ինքնասպանություն գործել, սակայն որոշ հանգամանքներ նրան ետ են պահել այդ քայլը կատարելուց. «Ջուրն ընկնիլ՝ էլ չէի կարող, չունքի Աստուծո ահը մտքումս, անմեղ բոռփիս ձեռը անկաջումս էր. սերն ու ծնողական գութը ջիղյարումս, ես դինջանայի, էթրմին ով պահեր»[1]; կամ «Մէկ բարիկենդանի՝ աշակերտներիս որ բաց թողի, սկսեցի՝ ինչ որ երեխությունիցս լսած, կամ տեսած բան գիտեի, տակ ու ղլուխ անիլ։ Վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկավ... մեկ երես բան դեռ չէի գրել, որ մանկական սիրելի բարեկամ ու ազնիվ Հայազգի պարոն դոքտոր Աղասֆոն Ամբասյանը ներս մտավ... Նրա սուրբ բարեկամության եմ պարտական, որ մունջ լեզուս բաց արեց։ Նա դնաց թե չէ՝ կրակը ջանս առավ։ Սնաթի տասն էր առավոտի... դիշերվան մինչև սնաթի հինգը ոչ հացի մտիկ արի, ոչ չայի... երեսուն թարադեն էն ա լցվելով էր, որ ընությունը իր պարտքը պահանջեց, աչքերս գնաց... [առավոտյան] աչքս բաց եմ անում, իմ խեղճ, դարիր գերմանացի կոդակցի ձեռն ա ընկնում ականջս։ Տեսնիմ իմ միայնակ որդին դոշին առած... գժվածի պես վեր թռա, երեխիս եմ նայում»։

Ի՞նչ են հետևում այս մեջբերումներից։ Արովյանը պարզ ասում է, որ իր վեպի գրությանը ձեռնարկել է բարեկենդանին։ Քանի որ սովորաբար բարեկենդանը հայերի մոտ կատարվում է փետրվար ամսին, հետևաբար «Վերքը» սկսել է գրվել փետրվար ամսից։ Երբ Արովյանը ստեղծագործական ինքնամոռացության մեջ գրելիս է եղել վեպը, մինչև այդ ծնված է եղել անդրանիկ որդին՝ Վարդան Արովյանը։ Մենք հաստատապես գիտենք Վարդանի ծննդյան թվականը՝ 1840 թիվ, մայիս 31։ Կարող էր Արովյանը 1840 թվականի փետրվարին գրած լիներ իր վեպը և հիշատակել նրա մեջ, որ երբ ինքն ինքնամոռացության մեջ էր ընկել, կինը երեխային գրկած լաց էր լինում։ Իհարկե, ոչ։ 1840 թվականի փետրվարին նրա որդին դեռ ծնված չէր և եթե այդ ժամանակ գրված լիներ վեպը՝ ապա որդու մասին ոչ մի հիշատակություն չէր կարող լինել այնտեղ։ 1841 թվականի փետրվար ամսի համար դա միանգամայն բնական է, որովհետև ոչ միայն արդեն ծնված էր նրա որդին, այլև գրկի երեխա էր։ Սրանից էլ հետևություն. «Վերքը» Արովյանն սկսել է գրել 1841 թվականի փետրվար ամսից։ Սակայն սա միակ փաստը չէ, որ խոսում է վեպը 1841 թվականի փետրվարին գրված լինելու օգտին։ Կա մի երկրորդ հատված ևս, որը հաստատում է մեր առաջարկած թվականը։ Արովյանը «Վերքում» գրել է. «Մյուսը (Սումբաթովը — Պ. Հ.) հո՝ որ ադգի աչքի լիսն ա էս օր էլ, տարի ու կես կառավարիչ էր բոլոր հայոց նահանգին[3]։ Խոսքը գնդապետ Գևորգ Սմբատյանի մասին է, որը Հայկական մարդի կառավարիչն է 1839—40 թվականներին։ Գ. Սմբատյանը աշխատանքից ազատվել է 1840 թվականի ապրիլի 10-ի հրամանագրից հետո, երբ Հայկական մարդը իրրև վարչական միավոր դադարել է գոյություն ունենալուց։ Դա տեղի է ունեցել տարվա երկրորդ կեսին։ Մեջբերած հատվածում Արովյանը խոսում է անցած իրողության մասին։ Կարող էր նա

---

[1] Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 4։

[2] Նույն տեղում, էջ 4 – 6։

[3] Նույն տեղում, էջ 183։

Գ. Սմբատյանի մասին խոսել իբրև երբեմնի հայկական մարզի կառավարչի, եթե «Վերքը» գրված լիներ 1840 թվականի բարեկենդանին կամ էլ՝ 1840 թվականին ավարտված լիներ։ Իհարկե, ոչ։ Իսկ 1841 թվականին կամ դրանից հետո, այո, կարող էր, որովհետև այդ ժամանակ հայկական մարզը գոյություն չուներ, և Գ. Սմբատյանը ազատվել էր կառավարչի պաշտոնից ու տեղափոխվել Թիֆլիս (նա, ինչպես Աբովյանը հիշում է այլ առիթով, այցելել է իրեն)։ Հարց է ծագում այժմ, չի հակասում արդյոք մեր առաջ քաշած թվականը «Պարապ վախտի խաղալիքի» առաջաբանին, ուր «Վերք Հայաստանին» հիշվում է որպես պատրաստի գործ... «Սրա (Աղասու—Պ. Հ.) պատմությունը շատ երկար է, որ դրած մոտիս հազիր ունիմ ու նրանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարքի հալը։ Գրքի անունն ա «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի»[1], ասում է գրված «Խաղալիքի» առաջաբանը։ Ինքնագրի մեջ առաջաբանը պարունակող համապատասխան էջերը և անվանաթերթը, որոնց վրա սովորաբար նշանակվել է գրության թվականը, բացակայում են, իսկ Ենֆիաճյանցի հրատարակության մեջ թվակիր են և գիրքը, և առաջաբանը՝ 1841՝ Թիֆլիզ։ Մի կողմ թողած հավաստի է, թե ոչ այդ թվականը՝ դիմենք ժողովածուին և տեսնենք, թե ինչ թվակիր նյութեր է պարունակում այն։ «Խաղալիքին» կցված է «Ֆեոդորա» դրաման, գրված 1841 թվականի հուլիսի 11-ին։ Ուրեմն ժողովածուն չէր կարող կազմված լինել 1841 թվականի հուլիսին։ Ժողովածուի ոտանավորներից մեկը՝ «Իմ բարեկամ Աղաջան Վարդանյանի պատկերի առաջին» գրված է 1841 թ. սեպտեմբերի 5-ին։ Ուրեմն «Խաղալիքը» 1841 թվականի վերջին քառորդից առաջ չէր կարող կազմված լինել։ Այն փաստը, որ «Խաղալիքի» առաջաբանում «Վերքը» հիշատակվում է իբրև պատրաստ գործ, բնավ չի ժխտում նրա 1841 թվականի փետրվարին գրված լինելը, այլ, ընդհակառակը, հաստատում է «Վերքի» 1841 թվականին գրվելը։

Վերջերս պրպտելով զանազան տպագիր ու անտիպ նյութեր «Վերքի» գրության ժամանակի ու հանգամանքների մասին, մենք հանդիպեցինք Աբովյանի մի ինքնաձեռագիր վկայությանը, ուր նա ասում է. «Ինձ համար այնքան հիշարժան 1841 թվականի բարեկենդանին սկսեցի իմ պատմությունը»։ Աբովյանի այս վկայությունը հաստատվում է վերևում մեր բերած փաստերով։ Ավելորդ է սրանից հետո, մեր կարծիքով, վեպի գրության թվականի մասին նոր փաստեր բերելը։ Հեղինակի բառերը վերջնականապես հաստատում են, որ նա «Վերք Հայաստանի» պատմավեպի ստեղծմանն է ձեռնարկել 1841 թվականի փետրվարին։ Մեր կարծիքով 1841 թվականն էլ նշված է եղել նախապես վեպի անվանաթերթի վրա, որ եղծվել է անցյալ դարի 60-ական թվականներից հետո։ Այդ բանը հաստատվում է Ազարյանի մի վկայությամբ։ Իր «Մի քանի խոսք Աբովյանի վերա» հոդվածում անդրադառնալով «Վերքի» առաջին հրատարակության, նա գրել է. «զարմանալի բան է, որ Վերք Հայաստանի տպագրության մեջ ցույց չէ տված, թե երբ է գրված նա. բայց մենք տեսնում ենք ձեռագրումը, որ նա գրված է 1841-ին»[2]։

Մեր վերջնական եզրակացությունն է. Աբովյանը «Վերքի» գրությունն է ձեռնարկել 1841 թվականի փետրվարին: Հայ նոր գրականության հիմնաքարի ստեղծման սկիզբը այսուհետև ոչ թե պիտի համարել 1836, 1838 կամ 1840 թվականները, այլ 1841 թվականի փետրվար ամիսը[3]:

---

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 190։

[2] «Կռունկ» ամսագիր, 1861, էջ 545։

[3] Տեղեկագրի 1952 թվականի № 5-ում տպագրված մեր «Խ. Աբովյանը և ռուսական առաջավոր կուլտուրան» հոդվածի մեջ թույլ է տրված մի անճշտություն. „Прощаюсь, ангел мой... բանաստեղծությունը համարված է Աբովյանի ինքնուրույն ստեղծագործությունը։ Մեզ շփոթեցրել էր բանաստեղծության տակ եղած գերմաներեն մակագրությունը։ Պարզվում է, որ այն հանդիսանում է ռուսական ժողովրդական երգ։